

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՌԱՀ ՇՀԱՊՁԲ-15/1-17/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

18.01.2017թ.
Ժամը 11:00

«ՀՌԱՀ ՇՀԱՊՁԲ-15/1-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին.

1. Հայտերի գնահատման արդյունքները՝ հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.

«Սիֆիէս Օիլ Քորփորեյշն», «ՖԼԵՇ» և «Մաքսիուր» ՍՊ ընկերությունների կողմից շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգին ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին և գնահատվում է բավարար:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ներկայացվող պահանջները.

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացրել հրավերով սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ԵՏՄ ապրանքի ծագման երկրի սերտիֆիկատը:

3. Ներկայացված փաստաթղթերի համապատասխանության գնահատումը, գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը.

Հանձնաժողովը բավարար է գնահատել 2-րդ կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

4. «ՀՌԱՀ ՇՀԱՊՁԲ-15/1-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հրապարակում.

Հանձնաժողովը որոշեց՝ ընտրված մասնակից ճանաչել «Սիֆիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊ ընկերությանը և պայմանագիր կնքելու նպատակով առաջարկել անգործության ժամկետի ավարտից հետո 5 (հինգ) օրացույցային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի ձևով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետը սահմանվում է 5 (հինգ) օրացույցային օր:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հրապարակելու մասին.

«ՀՌԱՀ ՇՀԱՊՁԲ-15/1-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրի կնքման կամ պայմանագիրը չկնքելու դեպքում՝ համապատասխան հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրացույցային օրվա ժամը 11:00-ին:

6. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ (ԳՊ/ԳԱՊ)

ՀՌԱՀ աշխատակազմի իրավական ապահովման բաժնի պետ

Ա. Ներսիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ (ԳՊ/ՄՀՄ)

ՀՌԱՀ աշխատակազմի գործերի կառավարչության գլխավոր մասնագետ, գնումները համակարգող

Ա. Մատինյան

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԳԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի ծրագրերի մոնիտորինգի բաժնի պետ

Լ. Մովսեսյան

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԳԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի իրավական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Ք. Քոչարյան

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԲԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի միջ. կապերի, տեղեկատվության և զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ

Գ. Դարբինյան

Հանձնաժողովի անդամ՝ (ԳՊ/ԲԱ)

ՀՌԱՀ աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ

Է. Գրիգորյան